

ՏՀԱՐԱԽՐՁ ԵՒ ԿՆՈՒՆՔ

Դաշտան. — Այս գաւառում եւս կանանց դաշտանը առաջին անգամ երեսում է 14—15 տարեկան հասակում, երբ շատերն արդէն ամուսնացած են լինում:

Դաշտանը տևեսում է 3—6 օր. երբեմն էլ մի քիչ աւելի: Այժմ սովորել են սրա համար յատուկ շարեր կարել և իրենց օժիտի հետ տանել, մինչզեռ մի տասնեակ տարի առաջ, հէնց այժմ էլ աւելի չքաւորները, բաւականանում են հին շոբերի, շատ անգամ կեղտոտ, կտորտանքով:

Ջատերը մինչև դաշտանի կտրուիլը մի կամ երկու անգամ դու ջրով լուացում են:

Դաշտանի ընթացքում ոչ մի կերակրից կամ խմիչքից չեն գգուշանում:

Մատաւորապէս իմանում են դաշտանն սկսուելու օրը և եթէ չի սկսում սոխի կճեպը եփում, ջուրը խմում են, կամ ուները տաք ջուրն են դնում:

Խոկ եթէ դաշտանը սաստիկ է լինում, ոտները սառը ջուրն են դնում, որի մէջ հանգած կիր են ածում, մէջքին հինարով և մեղրով եախու դնում. (մեղրը քսում են մի շորի վրայ, հինա ցանում և դնում մէջքին:)

Ամլութիւն. — Այս գաւառումն էլ ամլութիւնն Աստուծոյ պատիժ են համարում և ամուլ կանանց նախատում են ոչ միայն նրանց սկսորանքը, այլև ամուսինները: Ասկաւ չի պատահում, որ ամուլ կնոջ ամուսինը ապօրինի կին պահէր՝ ռօջախի յարատելութեանց լուսով:

Առաելապէս այս նախատինքից ազատուելու լուսով կանալք դիմում են հետևեալ միջոցներին. —

ա. Խնդրում են սրբերի միջամտութիւնը՝ ուխտ գնալով
ա. Սարգիս, Ամանակին, ս. Նշան և այլ ուխտատեղիները:

Այսուեղ մատադ անելուց յետոյ իրենց գօտին դնում են ուխտատեղու բեմի վրայ և ժամասացութիւնից կամ պատարագից յետոյ խնդրում շատ որդիների հայր մարդու՝ որ գօտին վերցնի և կապի իրենց մէջքին:

բ. Երեք անգամ անցնում են Պ. Շուլավէրի «Նակքար»¹⁾ և ս. Նշանի «Թնդոցի»²⁾ միջով:

գ. Սուրբ Համարուող ծիծեռնավի բունը, որ ուրիշ գէպքերում անձնունմխելի է Համարուում քանդում են, լցնում ջրի մէջ և լողանում:

դ. Գրբացների օգնութեան են դիմում:

ե. Կաւէ, բոլորովին չբանացրած քիլալի (ջրաման) մէջ ջուր են ածում, տանում զերեզմանատուն և մի անվլշատակ (սերունդ, լիշող չունեցող) ննջեցեալի զերեզմանի վրայ իրենց ձեռքերն ու ոտները լուանում և ջրամանը զերեզմանի վրայ կտրում են:

գ. Պառաւ ննջեցեալին լողացնելիս վերցնում են թիկունքի և արմունկի վրայով վազած ջուրը և խմացնում ամուլ կանաց, ինչպէս և լցնելով ուրիշ ջրի մէջ լողացնում են նրանց:

է. Շախու են դնում մէջքին, ալտինքն կինան և մեղրը խառնելով քաշում են մի շրի վրայ և կապում մէջքին:

Յղութիւն.—Յղութեան օրերում կնոջ դրութիւնը ոչնչով չի փոխում, նոյն իսկ աշխատանքը աւելանում է, որպէսզի ռաշխատանքի, բեռի տակ երեխան փորումը չմեծանայ և նըրան շրջի «(անկողին ձգի):

Եւ այս պատճառով շատ անգամ պատահում է, որ երեխան ծնուռմ է անտառում, դաշտում, կնոջ աշխատելու ժամանակ. ալտիկս՝ չաղբատում Առանց հարս Թայդուլը Օղի լեռան գլխից իջնելիս աղջիկ է բերել, փէշերի (քղանցք) մէջ

¹⁾ Նակքարը Պ. Շուլավէրի մօտ մի ահագին ժայռ է, որի մէջ կան երեք ծակեր:

²⁾ «Թնդոցը» ս. Նշանի մօտ այն քարայրն է, որտեղ Օհնեցու աղօթքով ջուր է սկսել բղխել: (Տես Սւանդութիւնների բաժնում):

փաթաթել և բերել զիւզ: Անսամանց վառվառը ձորում ընկոյդ հաւաքելիս երեխայ է ծնել, փէշի մէջ փաթաթել և բարձրացել զիւզ:

Ինչպէս զրազմաւնքի, այնպէս և ուտեստի և խմէքի մէջ չեն նախադաւշանում, և նոյն խոկ ընդհակառակը բոլոր քը-մահանորքները կատարում են, հաւատալով, որ եթէ մերժեն, երեխայի աչքը ծուռ կը մնայ: Ցդի կնօշ այս որկրամոլութիւնը ժողովուրդը և մտագոյն լինելը է կոչում և թէպէս մեծ մասնիր կատարում է, սակայն ոչ սակաւ անգամներ էլ իրենք կանայք առանց հարցնելու կամ ծածուկ անում են, հաւատացած լինելով, որ երբ ոկեառանք իմանան՝ ներողամտութեամբ են՝ վերարկրուելու Արագէս օր. դի կինը երբ սփրիտը ուզում է և բռնում է մի հաւ, շերեփը գնում իւր երկու տոնների միջն.՝¹⁾ մորթում հաւը և եփում ուտում տնեցիներից ծածուկ:

Ցդի կինը հոգս տանելով, որ իւր որովանի պատուդը գեղցիկ լինի՝ խօսուում է աւարի փաթճաղը, ուտում և մատը թաթախելով նրա հիւժի մէջ՝ դնում իւր մարմնի այն մասի վրայ, որի համապատասխան մասում՝ երեխայի վրայ կամենում է խալեր — սև գծեր — տեսնել:

Նոյն նպատակով զրկցից երկու ձու է գողանում, ուտում և կճեպը զլխի վերաբով թապում ասելով. «Իմ էրեխնէն վարդի նման խալեր ունենայ»:

Դեռ չծնուած երեխայի սեռն որոշելու համար նաբում են մօր փորին, եթէ և երեխան ձախ կողմն է՝ աղջիկ է, խոկ եթէ աջ կողմը՝ տղայ: Ամանք էլ մի կտոր շիր են ձում կրակի մէջ և նրա ստացած ձևից գուշակութիւն անում:

Զատ կանայք սարդի (գրդարարար) ոստայնը մատով ծուկում են և ասում. եթէ արգան օրում ալս ծակը լցուի նորից, տղայ կունենամ, խոկ եթէ ցցուկ՝ աղջիկ:

Վիժելու համար դիմում են հետևեալ միջոցների.

¹⁾ Արովհետեւ ժողովողի կարծիքով կնօշ մորթանը անսուրը է, ուստի և նա շերեր է դնում իւր ուսների միջն. որ տղամարդ համարուի:

ա. Տատմայրը տրորում է լղի կնոջ վորը:

բ. Ալաքլունդ կոչուած միջատը չորացնում, ծեծում և ջր-
բռվ կադ գինով խմում են:

գ. Բարձր տեղից թռչում են:

դ. Ֆանր իր են բարձրացնում:

ե. Փորին երկանք են դնում և աղում:

Ցղի կանանց պաշտպանն համարում են Չորեքշրթա-
մուտք, Ալրըթամուտք և Կիրակամուտք ոգիները, ՚ի պա-
տիւ որոնց երեքշրթի՝ լորս չորեքշրթի, Հինգշրթի՝ լորս
ուրբաթ, շաբաթ՝ լորս կիրակի կանալք և մասամբ տղամար-
դիկ կիրակի են պահում — զործ չեն անում և առաջաստ չեն
մտնում:

Այս ոգիները օգնում են լղի կանանց ծննդարերութեան
ժամանակ, եթէ միայն վերջիններս պահել են նրանց կիրակին,
խակ եթէ ոչ՝ վրէժինդիր են լինում, աւելի դժուարացնելով
երկունքը և կամ առատաւորելով նորածնին. պատմում են, թէ
մինչև անգամ նրանք վրէժ են առնում նրանց ամուսիններից,
եթէ սրանք արգելք են լինում նրանց օրինապահութեան:
Այսպէս, ասում են, թէ մի մարդ շարունկակ ստիպել է կնոջը
կիրակմուտք չպահել, չնայելով որ նա սաստիկ ցանկացել է
պահել: Մի կիրակմուտք օր այս մարդը զնացել է զետում ձուկ
որսալու, հակառակ իւր կնոջ աղաչանքներին՝ այդ օրը չաշ-
խատելու: Այստեղ կիրակմուտքը մի երիտասարդի կերպարան-
քով եկել է նրա մօտ, և ասել, թէ ինչո՞ւ կիրակմուտք չես
պահում: — Կիրակնամուտքը բնչ է, ով է, որ ես նրա համար
կիրակի բռնեմ, ուզում է թող գայ կոխ բռնենք: — Լաւ, պա-
տասխանում է այդ երիտասարդը, կիրակմուտքը ես եմ, Ակ տես-
նենք:

Այս ասելով նա բռնում է այդ մարդու ձեռքից և զետը
շփուտում, խեղդում: Մի ուրիշ գիւղացի, որ մօտից լսելիս է
եղել նրանց խօսակցութիւնը, լուր է ըերտում կնոջը:

— Ես գիտեի, պատասխանում է կինը, որ նրա վախճանը
ալդպէս պիտի լինէր, քանի որ նա չեր կամենում կիրակմուտք
պահել:

Ժնունդ. — Երկունքի օրերը մօտենալիս անպատճառ հրավիրում են քահանալին, որ Հաղորդութիւն տալ ծննդկանին, որպէսզի նախ հեշտութեամբ ազատուի և երկրորդ՝ դժբաղդ գէպքում անհաղորդ չմեռնի:

Առաջին որդեհնութեան ժամանակ անպատճառ հրաւիրում և նոյն իսկ, եթէ ուրիշ գիւղումն է, գնում ըերում են ծննդկանի մօրը: Գալիս է նաև տատմալլը, իսկ ծանր դրութեան միջոցին՝ բանիմաց հովիւ — այս նախնական մանկաբարձը, որ կենդանիների վրայ գործնականապէս ուսումնասիրել է յանկարարձութիւնը: Այսպիսի բանիմաց հովիւները սակաւաթիւ են և յայտնի ամբողջ գաւառին. նրանց դիմում են ոչ միայն իւր համագիւղացիք, այլ և շրջակայ զիւղերից: Արանցից նշանաւոր է հաղրատեցի «չոպան Պէտն», ուղունլարցի «Աւտանց չոպան Բարսեղը» և այլն: Արանք նոյն իսկ անդամակատութիւններ են կատարում — ածելու վրայ շոր փաթաթում, ծայրը բաց թողնում և ապա սրանով երեխան կտրրտում, արգանդից հանում են:

Ծննդաբերութիւնը հեշտացնելու համար տատմէրը և տընեցիները դիմում են հետևեալ միջոցների.

ա. Տան մէջ գտնուած բոլոր ծածկուած իրերը, ծալքը, դաները, կարասները, ամանները բաց են անում, որպէսզի «ծննդկանի արգանդն էլ բացուի»:

բ. Ծննդկանի ամուսնու տրեխի կրունկի մէջ ջուր են ածում և շաղ տալիս ծննդկանի կրծքին, որպէսզի «ինչպէս տրեխի կրունկն է բացում, այնպէս և ծննդկանի արգանդը բացուի»:

գ. Քզանցքի ծայրով երեք անգամ ջուր են խմացնում ամուսինը կամ կայծակի կարուածի ենթարկուածը և կամ ով գորտը օձի ըերանից ազատել և երեք անգամ արդ սպանած օձի և գորտի միջով անցել է:

դ. Ամուսինը հերթիկից մի ձու է վայր ձգում, կոտրում:

ե. Ծննդկանի մէջքի վրայ մի հաց են ձեռով կիսում և տալիս աղքատի:

դ. Ծննդկանին տղամարդի գլխարկ են ծածկում, որ-

պէսզի «չարը խափանի», կարծի թէ տղամարդ է, հեռանալ»:
է. չբացանենք ին արձակում, որպէսզի «չարերը փախ-
չեն»:

ը. Դութանը բարձրացնում են կտուրը և մի շրջան զը-
ծում ծննդկանի դուռութ տեղի վերև, որպէսզի «չարերը ըը-
կարողանան այդ շրջանից անցնել»:

Խոկ երբ ծննդկանը ուշագնաց է լինում, դիեխն մի հաց
են դնում, ապա երկու կտոր անում, վերան երեք բուռ աղ
ցանում և մի աղքատի տալիս:

Ոմանք էլ հացը վառում են, ձզում քացախի մէջ և տա-
լիս ծննդկանին հոսոտենիու:

Երբեմն էլ ջրախառն քացախի մէջ շաքար աւելացնելով
խացնում են:

Ծննդկանը ծունք է չոքում օջախից հեռու, դռան յիտևը,
մեղք համարելով մերձենալ օջախին: Եւ երբ երկու ոտների վրայ
ծունք չոքած և երկու կանանց մէջքերից բռնած «ազատ-
ւում է», անմիջապէս պառկեցնում են հէնց այդ տեղում ածած
ծղօտի վրայ, նախապէս միախ մի սաւան ձգելով:

Հատ անգամ տատմէրը շիշը դնում է կրակի մէջ տա-
քացնում, ապա ծունք զրած կնօջ շուրջը երեք դիմ քաշում
և շիշով (շամփուր) երեք անգամ խաչակնքում, որպէսզի չարը
դնից ներս չմտնի. յետոյ երբ ծննդկանին պառկեցնում են,
կրկին նոյն տաք շիշով երեք համակեզրոն շրջան են գծում,
խաչակնքում, շիշը խփում ծննդկանի սնարի մօտ և մի քիչ
աղ ու հաց դնում ծննդկանի բարձի տակ, որ չարը չմօտե-
նալ:

Ծննդկանին պառկեցնելուց յետոյ տատմէրը կռան տակ
մի հաց է դնում, որ «երեխան զսմթով»—բաղդաւոր լինի և
պորտը դնում է քաքորի վրայ, որ «անասնասէր լինի և «պոր-
տակտրի» 10–20 կ. ստանալով դնում բերանը և մի դանա-
կով կտրում պորտը, բամբակի թեղով կապում, դանակը մի
տեղ պահում, որ յետոյ մեռոնաջրով սրբեն: Ապա ընկերքը
թաղում են կամ զետը ձգում և կամ ծննդկանի տակ ձգուած
ծղօտի հետ վառում: Խոկ եթէ այդ ծննդկանի երեխաներն

առհասարակ չեն ապրում, նորածնին արևշատութիւն տալու յուսով ընկերքը թագում են տան օեամի բնուելը:

Եթէ ընկերքը շուտով չի ընկնում, մի հին, անպատճառ հին տրեխից կապում են, որ այլևս չուշանալ և շուտով ընկնի և կամ ծննդկանին ասում են, որ մի շիշի մէջ բոլոր ուժով փչի:

Պարտը կտրելիս արիւնը քսում են նորածնի ալտերին, որ կարմիր լինին»:

Արանից յետոյ տատմէրը լողացնում է նորածնին. ասելով. «Խս ջրի պէս ումրդ երկար րի, Ըստծու աջողութիւնը վրէդ ըլի,

Մաստ ըլիս,

Լու ըլիս,

Աւրախ ըլիս:

Ապա ջրից հանում են, հայր ու մայր ունեցող և բաղդաւոր համարուող մի անձն մի քիչ աղ է ցանում երեխալի վրայ և ապա ազը լցնում տատմօր բուռը, որ ցանելով երեխալի բոլոր մասերի, նոյն իսկ բերանի մէջ՝ ասում է.

«Աստուած, դու պահես էս երեխին, չարէն թափես, դևից ապատես, ամեն փորձանքից դու պահես, պահպանես»:

Յետոյ բալուլում է, բալուլի վրայ մի հաց դնում, իւր ձեռն էլ ծայրին. սոխ անցկացրած մի շիշ առնում, դուրս գալիս տանից, դառնում դէպի արեւելք և ասում.

«Ասւը բեզնակ, էս երեխի փայը տաս, երկնքիցը ցող ցօղալ, գետնիցը պտուզ տանալ, մենք էլ, մեղաւորներս, սրա շուաքումը ուտենք կերակրուինք»:

Յետոյ դառնում է տուն և երեխալին դնում ծննդկանի աջ կողմը: Չի մոռանում նաև շիշը ծննդկանի բարձի տակ դնելու, աւելացնելով նաև դաշոյն, սանդերք և երրեմն հրացան, «որպէսզի չարերը չհամարձակուին մօտենալ»:

Այս բոլորից յետոյ հրաւիրում է քահանան «տունը փարատելու»: Նա օրհնում է ջուրը և շաղ տալիս ծննդկանի, պատերի, յատակի վրայ, որպէսզի որրուին և չարերը հալածուին: Ոյս ջրից պահում են, որպէսզի ծննդկանն ու տատմէրը շուա շուա իրենց ձեռքերը լուանան, սրբեն:



Почитание
солнца.

Սուրբ թեղնակ, ևս երեխիք
փայտ տառ (եր. 252).

Adoration
du soleil.

Այնուհետև սկսում են խնամել ծննդկանին. Նրան նախ մի սոխ են տալիս, որ ծամում և երեք անգամ գլխի վրալից ձգում է, լեռոյ մի քիչ մեղր են ուտեցնում առանց հայի, ապա երկու թերխորոշ ձու, հայուա, խաւիծ և ալլն: Միևնույն ժամանակ խմացնում են կամ մեղրով, կամ պղպղով և կամ կինսմանով (զանճաֆիլ) թէր:

Առվորարար ծննդկանի սնունդը լաւ է լինում, որովհետև տան երեխաներից մինը վազում աչքի լուս է տալիս բոլոր բարեկամներին, լայտնելով երեխայի ծննդեան մասին: Խակոյն իւրաքանչիւր բարեկամ սեղան է բերում—հաւ, փլաւ, տումա. հաց, պանիր և մանաւանդ հալուա: Անդան բերողները հիւրասիրում են ճաշով: Տառմէրն էլ օգտում է հանդամանքից և նորածնին հիւրերի գիրկը դնելով պորտակորէք 5—10-սկան հոտէկի տանում, որ բալուլի վրայ են դնում:

Առաջի երեք օրուայ ընթացքում ծննդկանին անշարժ թողնում են նոյն ծզոտի վրայ պառկած, իսկ երեխային օրը երկու անգամ լողացնում են, երկու անգամ խանձարուրում:

Եւ երբ պորտը ընկնում է, տան մի անկիւնն են ձգում, որ ամազլու լինի, տան պատի մէջ թաղում, որ երեխան տան հետ կապուած լինի, ամփոփում եկեղեցու կամ դպրոցի մէջ, որպէսզի եկեղեցասէր, ուսումնասէր լինի և ալլն:

Երբ անցնում են առաջին երեք օրերը՝ տառմէրը լողացնում է թէ երեխային և թէ ծննդկանին, վերջինիս համար անկողին ձգում, նրա մէջ պառկեցնում, իսկ նրա տակի ծըզոտը հանում է գուրս և վառում, որտվհետև «Աստուածածինն էլ է ծզոտի վրայ պառկել և լեռոյ վառել»:

Մինչև կնոնքը ծննդկանը անսուրբ է համարւում, նրան չեն մերձենում, նրա զործածած ամաններն առանձին են պահում, նրա բաժնից ուրիշները չեն ուսում:

Կնունք.—Առվորարար ծննդաբերութիւնից ութ օր լեռոյ կատարում են մկրտութեան խորհուրդը: Գալիս է տառմէրը, լողացնում թէ երեխային և թէ ծննդկանին, ապա մի զառ և մի շիշ օղի, իսկ եթէ աղքատ են, միայն մի շիշ օղի ա-

ուած գնում է քաւորի մօտ և խնդրում, որ առաւօտեան դայ և երեխան մկրտէ։ Սովորաբար իւրաքանչիւր զերդաստան ունի իւր տոհմական քաւորը, որին փոխում են միմիայն այն գէպքում, երբ նրա «ձեռքը տան վրայ չի գալիս» — արսինքն երբ նրա մկրտած երեխաները չեն ապրում։

Քաւորին ընդհանրապէս շատ են յարգում. սանամալը նրա հետ չի խօսում, նրա դռնից երբէք չի անցնում, նրան տեսնելիս փախչում, թաք է կենում, բոլոր նշանաւոր տօններին, ինչպէս՝ նոր-տարուն, բարեկենդանին, զատկին, վարդեռորին, քաւորի համար նուէրներ — բոխչա կամ սեղան են ուղարկում — մրգեղէններ, թխուածքներ, ձու, հաւ, դառ, գուլպաներ, զըրամի և ծխախոտի քսակներ, թաշկինակներ և այլն։ Քաւորն էլ իւր կողմից սրանց փոխարէն մի որևէ բան ուղարկում է սանամօրը և մանաւանդ սանիկին։

Մկրտութեան օրը քաւորը ուղարկում է կնգռող և սաւան, իսկ նորածնի տատը՝ նարօտ — սպիտակ ու կարմիր կամ կանչնչ ու կարմիր։

Տատմէըը երեխալին գրկած տանում է եկեղեցի, ուր գալիս է քահանան և քաւորը։ Գալիս են նաև միքանի աղջական կանալք, երբեմն էլ մի երկու տղամարդ, բայց ոչ երբէք երեխալի հայրը, այդ խստիւ արգելում է։

Մկրտութեան խորհուրդը կատարելուց յետու երեխան քաւորի գրկում, քահանալի առաջնորդութեամբ շարական ասելով զընում են ծննդկանի տունը։ Երբ ներս են մտնում, ծննդկանը տեղիցը վեր է կենում և կանգնում։ Քաւորի ձեռքը տալիս են երկու վառած մոմ։ Նա մօտենում է սանամօրը, որ գէպի երեխան կռանալով վերցնում է նրան և գնում իւր առջև դրուած բարձի վրայ, որի երկու կողմում մի մի հաց է դրուած լինում, որպէսզի երեխան «գովլրթուր», կարողութեան տէր լինի։ Ապա ծննդկանը վերցնելով մօմերը քաւորի ձեռքից, բռնում է իւր երկու ձեռքում, մինչև որ քահանան աւարտում է աղօթքը. ապա բոլորը համբուրում են աւետարանը, խաչհամբոյը տալիս և նստում ճաշելու։ Գերդաստանի մօտիկ աղջականները, 20—30 մարդ, հրահրուած են լինում։ Նաև

տղամարդիկ և ապա կանալք ճաշում են և «Աստուած երեխին օջախին բաշխէ» ասելով ցրւում։

Երեխայի անունը սովորաբար գերբաստանի մեծն է ընտրում, վերցնելով նրա ծննդեան օրը լիշտակուած սրբերի կամ իրենց գերդաստանի ննջեցեալ կամ ծերացած անդամների անուններից։ Երբեմն էլ մի որևէ հերոսի անուն կամ նոյն իսկ ազգանուն իրը անուն է տրւում երեխային, ալոպէս, օրինակ, կայ Մարդաթով, Բերտթով, Վարանցով, Նապալէօն, Ըննիրադ և այլն։

Ահա մի քանի ամենազործական անուններ իրենց կըրճատումներով։

Կ ա ն ա ն ց

Անահիտ.	Նդիսարէթ, Սարէթ.
Ասիեհատ, Ասկի.	Նումզար, Նոհեմզար, Նազօ.
Աստղիկ	Գայկանէ, Գարան.
Աստղենիկ.	Հռիփսիմէ, Հռումսիմ, Հռւսիկ,
Արուսեակ.	Հռում.
Զառնուշան, Զառնշան.	Բախտագիւլ, Բախչօ.
Հայաստան.	Բէկզատ.
Հայկանուշ, Անուշ.	Թագագիւլ.
Վարսենիկ, Վարսօ.	Գիւլյաս.
Վարդիթեր, Վարդօ.	Խանում, Խանըմ, Խանօ, Խանիկ,
Վարդիշադ.	Թալայ.
Ջուշանիկ, Ջուշան, Ջուշի	Նայուխան, Նայլխան.
Սաթենիկ, Սաթօ.	Շահագիւլ.
Մանիշակ, Մանշակ.	Սահարգիւլ, Սհարդիւլ.
Մանդուխտ, Մինդուխտ	Էփեմիա, Էփօ.
Խակուհի.	Փեփել.
Ջոլեր.	Դարիջան.
Բարբառէ, Բարբօ.	Մարգարիտ, Մրգարիտ.
Սիրամարդ.	Անուշիկ.
Հերիքնազ, Հերիք.	Մանիա.
Մալաք.	Էլիսօ.
Մարիամ, Մարիկ, Մարօ.	Վարինիա, Վառօ.
Մազդադ.	Կատինկա, Կատօ,

Տ դ ա մ ա ր դ կ ա ն ց

Աշխարհբէկ.	Անաստաս.
Անուշաւան, Անուշ.	Անդրեաս, անդրի.
Արամ.	Աննիքազ.
Արամալիս, Ամաս	Անտոն, Անտոյ.
Արտաշէս, Արտավ, Արտուշ.	Արգման.
Գարեգին.	Երիստակէս, Արտօնակ, Բառակէս.
Գեղամ,	Առաքել, Ըռաքել.
Գրիգոր, Գիրքոր.	Բարսեղ.
Լևոն, Լևոն.	Բերութով, Բերուդ.
Խամսար, Խամսայ.	Թաթէռա, Թաթի.
Կիրակոս.	Ցովհաննէս, Ռւհաննէս, Ռւհան.
Հայկ.	Ցօնան.
Ղևոնդ, Ղևանդ.	Նապալէօն.
Պապի, Պապուշ, Պապայ.	Ուկան.
Պատուական.	Պետրոս, Պետի, Պետոյ.
Ռուբէն, Ռուբէլ.	Պաւլէ.
Սահակ, Սհակ.	Սաղաթէլ, Սաղոյ.
Վարդան.	Սարիբէկ, Սարոյ.
Վարդագար.	Սահարդիկ.
Տիգրան, Տիգոյ.	Սարդիս, Սաքոյ, Սաքի.
Ահարոն, Հարոն.	Վասիլ, Վասոյ.
Ամիրիսան.	Վարանցով.

Մկրտութիւնից յետոյ երեք օր չեն լողացնում երեխային, որպէսզի «մեռոնը վար ջգալ» և երեխան «անմեռոն» — անպատճառ — չլինի, մանաւանդ եթէ աղջիկ է: Երեք օրից յետոյ նոյն տատմէրը հացի տաշտը դնում է թոնքի վրայ և լողացնում երեխային, չուրը թափում կամ թոնիրը և կամ օջախը, որպէս սուրբ տեղեր, որովհետև նրա մէջ գտնեսում է մեռոնի մնացորդներ:

Միքանի տատմէրներ երեխային մեռոնից հանելիս ասում են.

Հօրով ըլի,
Մօրով ըլի,
Բաղդաւոր ըլի,
Աստղով ըլի.

Փայտվ ըլի,

՚Մըլով ըլի.

Աստուած պահի պահպանի:

Ոմանք էլ ձեռքը քսում են աղջիկ երեխայի դիմին և
առում.

Կեսուրդ մազ է ուգում,

Պատրոնդ ոմոտէն¹⁾՝,

Տրի երկենքովը,

Կարմնջի լէնքովը...

Եւ այս այն հաւատով, որ երեխայի մազերը երկար լինին:

Մկրտութիւնից մի շարաթ լիտոյ, որպէս հատուցում քա-
ւորի կրած նեղութեան, ծննդկանի տանից ուղարկում է քա-
ւորանց տուն մի քանի դորդ գաթայ, տապակած հաւ, մրգեր,
դուլպայ, պաճին և ապն:

Մանկա ոածութիւն. — Սոխորաբար օրը երկու անդամ
խանձարուում են երեխային և պառկեցնելիս պարկի մէջ ա-
ծած և փոքր ինչ տաքացրած հող դնում տակը: Բացի կիրա-
կի, չորեքշաբթի և ուրբաթ օրերից, ամեն օր լողացնում,
ամեն լաց լինելիս ծիծ տալիս, օրօրում, նանիկ ասում, քը-
նացնուում:

Սրանից տաս տարի առաջ ծննդից երեք, իսկ այժմ մի-
այն մի օր լիտոյ են ծիծ տալիս, որպէսզի երեխան համբերող
լինի:

Օռանց որոշ ժամանակի, լաց լինելիս միայն, ծիծ են տա-
լիս և ժողովրական առածն էլ հաստատում է այս տոելով.
«Երեխան մինչև լաց լինի, մայրը ծիծ չխտայ»:

Սովորաբար մինչև նոր լրութիւնը կամ 3—4 տարի ծիծ
են տալիս: Սրանից աւելի երկար զգուշանում են ծիծ տալու,
որովհետև հաւատում են, թէ շատ ծիծ ուտողը բժամիտ կա-
րող է լինել:

Պատմում են դէպքեր, որ ամուլ կանալք, ինչպէս օրի-
նակ, օձնեցի զաւանց Ալեքսանդրի կինը, մի օտար երեխայի

¹⁾ Սամի թոփ:

անց են կացնում իրենց շապկի միջով, որդեքը ու սկսում իրենք ծիծ տալ: Միքանի օրից այդ ամուլ կանանց ստինքից սկսում է կաթ գալ:

Երբեմն էլ պառաւ կանալք, ինչպէս օրինակ, օձնեցի Ճարուինց լիուն տարեկան պառաւը, որ քսան տարուց ի վեր երեխալ չեր ունեցել, իրենց դստեր կամ հարսի մահից յետոյ իրենք են սկսում ծիծ տալ իրենց թռոներին:

Կաթ աւելացնելու համար ուխտ են գնում կուրթան զիւլի մօտ գտնուած «Կաթնաղբիւրը», մոմ վառում, խունկ ծխում, ստինքներն այդ ջրով լուանում և խմում:

Միևնույն նպատակով և նոյն կերպ ուխտ են գնում նաև Օհան Օձնեցու վանքի մօտ գտնուած «Օձի պորտի» աղջիւրը:

Խոկ եթէ այս միջոցները չեն օգնում, այն ժամանակ յանձնարարում են մի ուրիշ կնոջ, որ ծիծ տայ, միայն արս դէպքում աշխատում են, որ այդ կինը «Հալալ կաթնակեր» լինի, որովհետև «Դալի հետ մտածը հոգու հետ դուս կը գայ»:

Եւ կամ կովի կաթով են կերակրում, մի քիչ ջուր և սառը շաքար խառնելով հետո: Մի տաս տարի առաջ այժմեան ծծուկի (COCOKE) փոխարէն գործ էին ածում եզան եղջիւր, վրան կովի ծիծ, կամ մաքրած մորթուց կարած մի պտուլ անցկացնելով:

Խոկ եթէ կաթը շատ է լինում գառան կամ մեծ երեխայի ծծել են տալիս, շէկ հողը մաղում, անալի թանի հետ շաղախում քսում են ծծերին կամ ճումալը (գետի ափից կորուած քառանկիւնաձև, խոտալից հողի շերտ) սառը սառը դնում են ծծերի վրայ, կամ արաղի սապոնը մեղրով եփում և շորի վրայ քաշած դնում ծծերի վրալ և կամ քացախում թրջած հաց են դնում վերան:

Երեխալին ծծից ծորելիս ստինքների վրայ քսում են շաղախած աղ ու մեղր, հաւի ծերտ, ծխամուրճի կեղտ, և կամ շապկի բացուածքը կարում են:

Կնոջ կաթը իրը դեղ են գործածում աչքի հիւանդութեան դէմ. — բամբակի վրայ սառը շաքար են ցանում և ապա կաթի մէջ թաթախելով դնում ցաւած աչքի վրայ:

Մօր ամենամեծ հոգսերից մինն էլ երեխալին շարից առատելն է, որովհետև եթէ անհոդ գտնուին, «չարերը կըտանին երախալին»—(այսինքն կը կապտին և կը մեռնին): Այս նպատակով խողի պինը չորացնում և կապում են օրօրոցից, որովհետև չարերը խոզերին չեն մօտենում: Խոկ եթէ այս միջոցը չի օգնում և միւնուն մօր մի քանի որդիները այսպէս տարրում են, թթվիխի» են լինում, այն ժամանակ մի նոր երեխայ ծնուելիս զութանի զղթան ձգում են ծննդկանի շուրջը, որպէսզի արգիլին չարերին այդ շրջանից անցնել և մօտենալ երեխալին կամ նրա մօրը, ապա, երբ նորածինին լողացնում, աղում և խանձարուրում են, երեք անգամ տան հերթիկից անց են կացնում և գռնից ներս բերում:

Նոյն նպատակով զիմում են հետևեալ միջոցների.

ա. Երեխալին մկրտում են ոչ թէ եկեղեցում, այլ տանը, թանրի վրայ, տաշտի մէջ:

բ. Փաթաթում են էջի ծնի (նոր ծնած սփահի շապիք) մէջ և այդպէս պահում մինչև երեք օր:

գ. Մի ու հաւ են խեղդում և երեխալի ծնուած սենեակի շէմքում թաղում:

դ. Աև կատուի ականջը կտրում են և երեխալի քթի տակ ծխում:

ե. Երեխան ծնուելիս խախալի (մեծ մաղ) մէջ են առնում:

դ. Երեխալին եօթն օր կշռում են քաքորի հետ և քաքորները գետնում թաղում:

է. Երեխալին մի ուրիշ, բաղդաւոր որդիների տէր կնոջ շապիք բացուածքով անց են կացնում, որպէս թէ նրանից է ծնում:

բ. Երեխալին ծախում եմ մի որևէ մարդու և իրենք վերցնում «իրը ուրիշի որդի» պահում:

թ. Երբ երեխալին մկրտելուց իստոյ եկեղեցուց տուն են բերում, գնում են մի թուրքի գիրկ, իրը թէ այդ ոչ—քրիստոնեան է քաւորը եղել:

Խոկ շար աշքից պահնլու համար մի քիչ խողի մազ, մի

կոտրուած ասեղ և մի քիչ մոխիր ածում են մի քսակի մէջ և կախում երախայի վզից. կամ եօթ հատ աչքուլունք եօթը հոգի (շրտ կին և երեք տղամարդ) աղօթում են և մանկան թիւկունքին կարում, կամ օրօրոցից կախում և կամ ուզտի մազ եմ պահում մօտը:

Ճատ անդամ երեխաները «կոխուում» են» — հետզհետէ նիշարում և մեռնում և այս առաւելապէս այն գէպքում, երբ քսուասունքը ըրացած մի մարդ ներս մտնելիս երեխային չեն բարձրացնում տեղից, երբ մի քառասունքոտ կին է դալիս երեխայի մօտ և այն:

«Կոխից» բժշկուելու միջոցները հետևեալներն են.

ա. Մահմեդականի գերեզմանի վրայ լողացնում են երեխային:

բ. Եօթ տնից մօմ են մուրում, հալում և մի ծակ տախտակի միջով ածում ջրով լի մի թասի մէջ մօմի ստացած ձևից գուշակում, թէ ինչից «կոխուած» պիտի լինիւ — ինչից է յառաջացել հիւանդութիւնը — և ապա շորի մէջ փաթաթում և մի խաչ-ճանապարհի մէջ թաղում:

գ. Զօրեցարթի, ուրբաթ և կիրակի երեկոներն տանում են ներկարարի մօտ, նայել են տալիս ներկարարի կարասի մէջ, մոմեր վառում կարասի շրթունքին, և խունկ ծիռում:

դ. Մումիան¹⁾ խմացնում:

ե. Երեխայի հօր սուերի վրայ լողացնում են:

զ. Ծրիծեռնակի սուրբ համարուած բունը կամ դալի բերանը ձգում են տաք ջրի մէջ և այդ ջրով լողացնում երեխային:

է. Ֆալքալեղ դէպքում երեխային տանում դնում են մի աւերակ ջրալաց, «որ սովորաբար լի է լինում սատանաներով» և այլտեղ թողնում 3—4 ժամ։ Երբ վերադառնում են վերցնելու, կամ մեռած են գտնում, կամ պռօղջացած։

¹⁾ Փողովուրդը մումիան է կոչում այն քարացած ձանձախարիթը, որ գոյանում է դարաւոր խաչբարերի վրայ՝ մոմերի յաճախ վառուելուց։

Երեխային կալծակի հարուածից ազատելու համար աւագ հինգշարթի օրը եկեղեցում սպիտակի, կարմիր և կանանչ թելեր միմեանց հետ ոյորում են և հիտեսեալ առաւտեան, ուրաժ օրը, այդ թելով երեխայի դլխարկի, արխալուղի և կայ չուխի մէջ ծառ ասղնագործում: Եյս ասղնագործած ծառը կօչւում է ուրբաժարուր:

Երեխայի կաթնառուամները դուրս գալիս մայրը նրա հագած շապիկը մի քիչ պատռում է ասելով. «Իս շապիկի պէս առամի տեղն էլ պատռուի, ատամը դուրս գայ:» Երբ լնտերքը սկսում է եռ գալ, կաճած սոխ են տալիս երեխայի ձեռքը, որ խաճուի, եռքը անցնի:

Աւ երբ երեւում է առաջին կաթնառուամը՝ ծանողիլ են անում. — ցորեն են խաշում, քամում, մի քիչ հովացնամ և աղա երեխայի դլխին մի թաշկինակ ձգելով անում են դլխին: Մի քանի գիւղերում հաւեր են կանչում, որ հաւաքեն ծանդիլ, խոկ մի քանիսում ուրիշ փոքրիկ երեխաներ:

Խոկ երբ ընկնում է առամը, ձգում են թոնրի սնուածքի մէջ ասելով.

Մուկ մուկ տար ու ըի,

Իմ երեխաի համա էրծաթի ատամ ըի:

Երբ երեխան մի տարեկան է կառնում, ծննդեան օրը գնում են նրան այն տեղ, ուր նա ծնուել է և երեք անգամ շուր տալիս, որպէսզի գրան գտնող լինի:

Ուստ ելնելու համար երեխային հօր ոտների վրայ դնում լողացնում են, ո. Նշանի մինդոյի միջով երեք անգամ անցկացնում. թթխմորը կամ ծիծեռնակի բռւնը ձգում են տաք ջրի մէջ և դրանով լողացնում երեխային:

Բռնուամ են երեխայի ձեռքերից, կանգնեցնում ասելով.

Տոտանի,

Կանանչ խոտ ա:

Մէրն ուրախանալ,

Երեխէն տոտ ա:

Ման—գալուն օդնելու համար Շնոր են շինում:

Երեխալին մենակ թողած միջոցին վերան մի շիշ կամ մի խանձող են դնում, որպէսզի «չարքերը չմօտենան»:

Մինի մօտ տանելիս, առաջին անգամին վերջինս երեխալի ձեռքը մի ձու է տալիս (եթէ նա տղայ է) որպէսզի ձուի պէս սպիտակամուրու դառնալ, կամ ծոցը մի քիչ սպիտակ բուրդ դնում, (եթէ աղջիկ է,) որպէսզի բրդի պէս սպիտակահեր դառնալ:

Եթէ երեխան ուշ է լեզու ելնում, եօթ եկեղեցիների բարձանիներ են քսում բերանին, որ շուտով ակտի թօթուել: Իսկ եթէ ցանկանում են, որ նա «լեզուանի»—ճարտարախօս—լինի, ծիծեռնակի լեզուն քսում են նրա բերանին և երբէք կովի լեզու չեն տալիս ուստելու:

Եթէ երեխան հոյ է ուստում, կանանչ մողէսը քցում են մի փոքրիկ տոպպակի մէջ, մոխրով լցնում և երեխալի մէջքին կապած պահում վեց ամսոց մինչև մի տարի:

Երբ երեխան սաստիկ հագում է, մի տիկին են շինում և տանում մի աւերակի մէջ թաղում, որպէսզի հազը կտրուի:

Երբ երեխան ծաղիկ կամ կարմրուկ է հանում՝ ընկողզը ծեծում, փոքրիկ մոմ շինում և մի ափսէում երեք հատ դրած վառում են երեխալի սնարի մօտ, կարմիր շորեր են փառում շուրջը, օշարակ են սրսկում պատերին, որպէսզի «ծաղկամէրը» քաղցրութիւնով հեռանայ:

Դնողներն էլ տօն են պահում և միմեանցից հեռու մնում: